NEWSLETTER

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հայաստան, Երևան, 0015, Yerevan, Armenia
Պարոնյան 21/1 Paronyan
Armenian Red Cross Society
Հայկական Կարմիր խաչի ընկերություն

redcross@redcross.am
www.redcross.am

Նվիրիր Հույս

2017թ. դեկտեմբերի 9-ից հունվարի 7-ը ՀԿԽԸ-ն անցկացրեց «Նվիրիր Հույս» ֆոնդահայթայթման ակցիան, որի շրջանակներում Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայի ամանորյա տոնավաճառում հիմնվել էր «Հույսի խանութ»: Շուրջ 50 կամավորներ աջակցում էին ակցիայի իրականացմանը՝ ամեն օր հերթապահելով տնակում:

Հանրային ակցիայի ժամանակ մարդիկ գնում էին փոստային քարտեր և նվիրում «Հույս»՝ երեք տարբեր ուղղություններով՝Ջերմություն՝ հանրակացարանաբնակ միայնակ տարեցներին, Առաջին օգնության դասընթացներ՝ սահմանամերձ համայնքների բնակիչների համար, Սեր և հոգատարություն՝ հանրակացարանաբնակ անապահով երեխաներին:
Բացի Հյուսիսային պողոտայում գտնվող տաղավարից, կամավորները մասնակցեցին նաև մի շարք Ամանորյա տոնավաճառների և ցուցահանդեսների:
Ակցիայի ժամանակ մեծ էր նաև կորպորատիվ հատվածի

աջակցությունը՝ Joomag Armenia, PicsArt Armenia ընկերությունների հետ մեկնարկեցինք #ITforHumanity նախագիծը, որի շրջանակում IT ոլորտի ընկերությունները միավորում են իրենց ջանքերը՝ հանուն մարդասիրական ծրագրերի:
Ակցիայի խթանմանը միացան նաև ՀԲԸՄ սկաուտական խմբակը և գրող Գրիգը:
Հանրային ներդրումների շնորհիվ հավաքագրվեց 1 736 650 դրամ, որից՝
1) Ջերմություն՝ հանրակացարանաբնակ միայնակ տարեցներին - 928 270 դրամ
Երևան, Հրազդան և Աբովյան քաղաքների 120 հանրակացարանաբնակ միայնակ տարեցներին փետրվար և մարտ ամիսներին տրամադրվելու են սննդային փաթեթներ:
2) Առաջին օգնության դասընթացներ՝ սահմանամերձ համայնքների բնակիչների համար - 363 060 դրամ
Տավուշի մարզի Բերքաբեր, Վազաշեն և Բաղանիս գյուղերի դպրոցների 150 երեխաների և ուսուցիչների համար մարտ և ապրիլ ամիսներին կազմակերպվելու են Առաջին օգնության, անվտանգ վարքագծի և ականներից պաշտպանության դասընթացներ ու վարժանքներ:
3) Սեր և հոգատարություն՝ հանրակացարանաբնակ անապահով երեխաներին - 445 320 դրամ
Երևան, Հրազդան և Աբովյան քաղաքների 70 հանրակացարանաբնակ երեխաների համար ապրիլ և մայիս ամիսներին կկազմակերպենք էքսկուրսիաներ և կրթական միջոցառումներ:

Give Hope

From 9 December 2017 till 7 January 2018, ARCS implemented the "Give Hope" fundraising campaign, establishing "Hope Shop" in the Christmas market at Northern avenue, Yerevan. Over 50 volunteers supported the implementation of the campaign.

During the campaign, people bought postcards and gave "Hope" to three main directions: 1) Warmth for lonely elderly people living in dormitories, 2) First Aid trainings for borderline communities, 3) Love and care for children living in dormitories.
Besides the "Hope Shop" in Northern Avenue, volunteers took part in various Christmas fairs and exhibitions.
Corporate sector greatly supported the campaign: together with PicsArt Armenia and Joomag Armenia companies, we launched the #ITforHumanity initiative where IT companies unite to support humanitarian programs.

AGBU Scout team and the writer Grig also joined us to promote the campaign.

A total amount of 1 736 650 AMD was raised throughout the campaign:

1) Warmth for lonely elderly people living in dormitories - 928 270 AMD
120 lonely elderly people living in dormitories in Yerevan, Hrazdan and Abovyan cities will be provided with food parcels for February and March
2) First Aid trainings for borderline communities - 363 060 AMD
We will conduct trainings and simulation exercises in first aid, safe behavior and mine awareness for 150 schoolchildren and teachers from Berqaber, Vazashen and Baghanis villages in Tavush region in March and April
3) Love and care for children living in dormitories - 445 320 AMD
We will organize excursions and educational events for 70 children living in dormitories in Yerevan, Hrazdan and Abovyan cities in April and May

Խորանում է համագործակցությունը ՀԿԽԸ և Իրանական Կարմիր մահիկի միջև

Cooperation deepens between Armenian Red Cross Society and Iranian Red Crescent

Հուշագրի ստորագրում

Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) Գլխավոր գրասենյակում հուլիսի 11-ին հյուրընկալվել էր Իրանի Կարմիր մահիկի ընկերության (ԻԿՄ) նախագահ Սեյեդ Ամիր Մոհսեն Զիաիի գլխավորած պատվիրակությունը:

Կողմերը քննարկեցին ներկա համագործակցությունը, նախանշեցին հետագա ուղղություններն ու համատեղ ծրագրերը:

Հանդիպման ավարտին կողմերը ստորագրեցին համագործակցության հուշագիր՝ պաշտոնապես ամրագրելու հետագա համագործակցությունը հետևյալ ոլորտներում. աղետների կառավարում, աղետներին նախապատրաստում և արձագանքում, աղետների ռիսկի նվազեցում, արտակարգ իրավիճակներին արձագանքում, հումանիտար աջակցություն աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ, սոցիալ - առողջապահություն, կազմակերպության զարգացում և կարողությունների հզորացում:

ՀԿԽԸ պատվիրակության այցը Իրանական Կարմիր մահիկ

Սեպտեմբերի 25-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) պատվիրակությունը նախագահ Մխիթար Մնացականյանի գլխավորությամբ, հյուրընկալվեց Իրանական Կարմիր մահիկի ընկերության (ԻԿՄ) Կենտրոնական գրասենյակում: Պատվիրակությունը, որի կազմում էին Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը և Միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ Մարիանա Հարությունյանը, Իրանում էր գործընկեր Ազգային ընկերության նախագահ Սեյեդ Ամիր Մոհսեն Զիայիի հրավերով:

Նախագահի հետ հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցինք այս տարի Երևանում կնքված փոխըմբռնման հուշագրում նախանշված ուղղություններով համագործակցության խորացման հնարավորություններն ու հետագա ծրագրերը: Հայկական Կարմիր խաչի ընկերություն կայցելի ԻԿՄ Աղետների կառավարման կենտրոնի ղեկավարը՝ տվյալ ուղղությամբ ՀԿԽԸ կարողություններին ծանոթանալու և համագործակցության ծրագրեր մշակելու նպատակով:

ՀԿԽԸ պատվիրակությունը հանդիպեց նաև Իրանական Կարմիր մահիկի գլխավոր քարտուղար Մուստաֆա Մուհամադիունի հետ, եղավ Աղետների կառավարման կենտրոնում:

Memorandum of Understanding

On 11 July, Iranian Red Crescent (IRC) Delegation headed by Seied Amir Mohsen Ziairi, President visited Armenian Red Cross Society Headquarters.

The two sides discussed current cooperation and outlined future plans and directions.

At the end of the meeting the sides signed a Memorandum of Understanding, officially stating the commitment to cooperate in the following areas: Disaster Management, Disaster Preparedness and Respond, humanitarian assistance in disasters and emergency situations, social –healthcare, organizational development and capacity building.

ARCS visit to Iranian Red Crescent

On 25 September, Armenian Red Cross Society (ARCS) delegation, headed by the President Dr. Mkhitar Mnatsakanyan, was hosted by the Iranian Red Crescent Society.

Headquarters. The Delegation, comprised of Dr. Anna Yeghiazaryan, Secretary General and Mariana Harutyunyan, Head of International Affairs Department, was invited by the Prof. Seyed Amir Mohsen Ziaee Iranian Red Crescent Society President. During the meeting with the President the parties discussed further plans and the possibilities to deepen the cooperation according to the directions mentioned in MoU signed in Yerevan earlier this year. Head of Disaster Management Centre if Iranian Red Crescent will visit Armenian Red Cross to get acquainted with the ARCS capacities in this area and to develop joint projects. ARCS delegation had a meeting with the Mostafa Mohamadioun, Secretary General as well, and visited Disaster Management Centre.

ՀԿԽԸ-ն շարունակում է ԱՌՆ ոլորտում միավորել շահագրգիռ կողմերին

ARCS continues uniting the stakeholders efforts in the field of DRR

Դեկտեմբերի 19-ին, Շիրակի մարզպետարանում հուշագիր ստորագրվեց ՀՀ Շիրակի մարզպետարանի, Հայկական Կարմիր խաչի ընկերության և ԱԻ աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական ծառայության և ՀՀ Շիրակի մարզի Անի, Ազատան, Ախուրիկ, Ամասիա, Անուշավան, Առափի, Արփի, Բենիամին, Մարմաշեն, Մեծմանթաշ, Նորկյանք, Պեմզաշեն, Սարապատ, Փանիկ գյուղական համայքների միջև:
Հուշագիրը ստորագրեցին Շիրակի մարզպետ Արթուր Խաչատրյանը, ՀԿԽԸ նախագահ Մխիթար Մնացականյանը և համայնքների ղեկավարները:

Հուշագրի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզպետարանը պարտավորվում է Հայկական Կարմիր խաչի ընկերությանը և Համայնքային կամավորական արձագանքման թիմերին ընդգրկել արտակարգ իրավիճակների արձագանքման մարզային պլանում, որտեղ հստակ ընդգծված կլինեն Հայկական Կարմիր խաչի ընկերության և Համայնքային կամավորական արձագանքման թիմերի դերը և պատասխանատվության շրջանակները: ՀԿԽԸ-ն ընդգրկված կլինի նաև ՀՀ Շիրակի մարզային ԱԻ հանձնաժողովի և Աղետների ռիսկի նվազեցման ՀՀ Շիրակի մարզային թիմի կազմերում: Շիրակի մարզեպտարանը կօժանդակի Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ նաև որպես ԱԻ ոլորտում մարդասիրական առաքելություն իրականացնող առաջատար դերակատարի, որն ունի տեղական և միջազգային համապատասխան արձագանքման կարողություններ՝ իր մարդասիրական առաքելության և աղետներին արձագանքման գործողություններում ներգրավված Հայկական Կարմիր խաչի ընկերության ուժերի աշխատանքների իրականացման հարցում և այլն:

On 19 December, in Shirak regional administration, Memorandum of Understanding was signed between Shirak regional administration, Armenian Red Cross Society, MES Shirak Regional Rescue Service and Ani, Azatan, Akhurik, Arapi, Arpi, Amasia, Anushavan, Pemzashen, Beniamin, Sarapat, Mets Mantash, Nor Kyank, Panik rural communities of Shirak region. Arthur Khachatryan, Head Shirak regional administration, Dr. Mkhitar Mnatsakanayn and the heads of communities signed the MoU.

According to the Memorandum, Shirak regional administration is committed to include Armenian Red Cross Society and Community Volunteer Response Teams in the emergency response regional plan, where the roles and the scope of responsibilities of Armenian Red Cross Society and Community Volunteer Response Teams will be clearly described.
ARCS will be also involved in the Committee of Emergency Situations of Shirak region and Disaster Risk Reduction team of Shirak region. Shirak regional administration will support Armenian Red Cross Society also in the field of implementing emergency humanitarian mission as a leading player, which has the capacity of relevant response of local and international level and implements his humanitarian mission and disaster response operations.

Նոր նախաձեռնություններ Տավուշի երեխաների համար

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ), որպես առաջնահերթություն սահմանելով մարզային մասնաճյուղերի զարգացումը, այս տարվա մայիսից նոր նախաձեռնություններ է սկսել Տավուշի մարզում, քանի որ այն սահամամերձ է և, այդ պատճառով՝ հատկապես խոցելի: Նախաձեռնությունները հիմնականում երեխաներին են ուղղված. ՀԿԽԸ Տավուշի մարզային մասնաճյուղը՝ Իջևանում, Դիլիջանում, Նոյեմբերյանում և Բերդում իրականացնում է «Երեխաների կայուն զարգացում» սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագիրը: Այն իրագործվում է 15 կամավորների միջոցով, և արդեն 8-14 տարեկան 120 շահառու ունի, որոնք մարզի տարբեր համայնքներից են, այդ թվում նաև՝ Իջևանի ՍՕՍ-մանկական գյուղից:

ՀԿԽԸ կամավորները, անցնելով դասընթացներ, ձեռք բերելով համապատասխան գիտելիքներ և հմտություններ, երեխաների համար ութ պարապմունք են անցկացնում, որոնց ընթացքում քննարկում են, թե ինչ իրավունքներ ու կարիքներ ունեն երեխաները, ինչ դեր կարող են ունենալ իրենց համայնքի կյանքում, ինչ է բռնությունը և ինչպես պետք է խուսափել դրանից: Կամավորները, երեխաների համար ընկերական և վստահության մթնոլորտ ստեղծելով՝ հնարավորություն են տալիս նրանց իրենց շրջապատի երևույթների մասին կարծիք ձևավորելու, դրանք ճիշտ ընկալելու և վերարտադրելու: Պարպմունքները նպաստում են նաև երեխաների ընդհանուր զարգացմանը, նրանց՝ հասակակիցների և մեծերի հետ շփվելու հմտություններ տալիս, դարձնում ավելի համարձակ, զարգացնում հանդուրժողականությունը և խթանում խնդիրներին կառուցողական մոտեցումների ցուցաբերումը:
Դասընթացներից բացի նախատեսված են նաև էքսկուրսիաներ մարզի տեսարժան վայրեր:
- Իմ առաջին փորձն էր ու շատ հաճելի էր շփվել նման երեխաների հետ: Դասընթացների ընթացքում զգում ու գիտակցում ես, թե որքան խոր ներաշխարհ ունեն ու ինչքան առաջ գնալու տեղ ունեն, քանի որ արտահայտում են այնպիսի մտքեր և ուշադրություն են դարձնում այնպիսի հարցերին, որ մենք ինքներս, միգուցե չնկատենք: Նրանց հետ շփվելիս օրդ լցվում է մանկական անկեղծ ժպիտով և ջերմությամբ: Ոչ միայն մենք ենք նրանց ինչ-որ մի բան սովորեցնում, այլ ինքներս էլ նրանցից շատ բան ենք սովորում, - ասում է ծրագրի կամավոր Անի Բարխուդարյանը:
Այսպիսի նախաձեռնություններընպատակ ունեն զարգացնելու Տավուշի մարզային մասնաճյուղի կամավորական ներուժը, ներգրավելու նոր կամավորների և հզորացնելու նրանց կարողությունները՝ այդ կերպ նպաստելով մասնաճյուղի գործունեության ընդլայնմանը:

New initiatives for children of Tavush

Armenian Red Cross Society, having defined the Branch Development as a priority, started new initiatives in Tavush in May, 2017, as it is border Region, and more vulnerable for that reason.
ARCS Tavush regional branch is implementing Child Resilience psycho-social support program in Ijevan, Dilijan, Noyemberyan and Berd. In 2017 it has been implemented with 15 volunteers for 120 children and adolescents aged between 8 and 14 in various communities of the region.

ARCS volunteers, obtained appropriate knowledge and skills through trainings, conduct eight lessons for children, discussing their rights and needs, what is violence and how to avoid it, their role in social life of their community. Creating friendly and trusting environment for children, volunteers, also contribute to the overall development of children, their ability to communicate with peers and adults, make them bolder, develop tolerance and promote constructive approaches to the problems. In addition to the courses, children participate in excursions and interesting events organized for them.
"This was my first experience, and it was a great pleasure to work with children. At the training sessions you feel and realize, how deep their inner world is and how far they can reach. They express so interesting ideas and pay attention to such kind of things, which we would never notice or think on. They fill my day with innocent sincere smiles and warmness. Not only we teach them something, but we learn a lot from them ourselves", said AniBarkhudaryan, Volunteer.
These kind of initiatives aim at developing Tavush Regional Branch volunteer potential, involve new volunteers and strengthen their capacities, thus contributing to the broadening of the Branch activities.

Բարեգործական ճաշարանի բացում՝ Մասիս քաղաքում

Նոյեմբերի 17-ին, Արարատի մարզի Մասիս քաղաքում տեղի ունեցավ Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ)՝ առավել խոցելի տարեցների համար գործող բարեգործական ճաշարանի պաշտոնական բացումը: Ծրագիրն իրագործվում է Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ:

Soup Kitchen opened in Masis city, Ararat Region

On 17 November, official opening ceremony of ARCS soup kitchen for the most vulnerable elderly took place in Masis city, Ararat Region. The project is supported by Swiss Red Cross.

Բացման արարողությանը ներկա էին Մասիսի քաղաքապետ Դավիթ Համբարձումյանը, Հայկական Կարմիր խաչի ընկերության նախագահ Մխիթար Մնացականյանը և Շվեյցարական Կարմիր խաչի միջազգային համագործակցության ծրագրերի համակարգող Ալեքսանդրա Պապիսը:

David Hambardzumyan, Masis mayor, Dr, Mkhitar Mnatsakanyan, ARCS President and Alexandra Papis, Swiss Red Cross International Cooperation projects coordinator, attended the event.

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ, այս տարվա հուլիսից բարեգործական ճաշարաններ գործարկեց Արարատի և Արմավիրի մարզերում: Այս նախաձեռնության շնորհիվ 80 տարեցներ յուրաքանչյուր մարզում ոչ միայն ապահովված են տաք, սննդարար ճաշով և հնարավորություն ունեն ամեն օր շփվել միմյանց հետ, այլև շրջապատված են ՀԿԽԸ կամավորների ու անձնակազմի ջերմությամբ ու հոգատարությամբ: Շահառուներն ընտրվել են հստակ որոշված կարիքների և մշակված չափանիշների հիման վրա: Գործընթացն իրականացվել է սերտորեն համագործակցելով՝ մարզպետարանների և քաղաքապետարանների սոցիալական հարցերի բաժինների հետ:

Հայկական Կարմիր խաչի ընկերության նախաձեռնությանը միացել են և իրենց աջակցությունն են ցուցաբերում նաև տեղական ինքնակառավարման մարմիններն ու մասնավոր սեկտորը՝ Մասիս քաղաքապետարանն աջակցել է տարածքի վերանորոգմանը, որն անվարձահատույց տրամադրվել էր մասնավոր անձի կողմից, Արմավիրի մարզպետարանն ապահովել է անվճար տարածք և կոմունալ ծախսերի փոխահատուցում, Արմավիրի քաղաքային տրանսպորտի տնօրինության հետ պայմանավորվածության համաձայն ապահովվում է տարեցների անվճար տեղափոխումը, «Ապարան» ջրի գործարանի կողմից տրամադրվում է խմելու ջուր, իսկ ՎԵԳԱ ընկերության կողմից՝ կենցաղային տեխնիկա:

With support of Swiss Red Cross, Armenian Red Cross Society launched soup kitchens in Ararat and Armavir regions in July, 2017. Thanks to this initiative, 80 lonely elderly from each region not only have hot, nutritious meal every day and an opportunity to communicate with each other, but are surrounded with the warmth and care of ARCS volunteers and staff. The beneficiaries were selected based on the defined needs and developed criteria. It was implemented closely cooperating with Social divisions of regional administrations and municipalities.

Other self-governance bodies and private sector also joined and supported the initiative. Thus, Masis Municipality supported the renovation of the space, which was provided by private person, Armavir regional administration provided a free space and reimburses utility costs, Armavir municipality make the city transport free for the elderly, "Aparan" company donates drinking water, and "Vega" company donated household equipment.

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը մարդասիրական օգնություն տրամադրեց Արմավիրի հրդեհից տուժածներին

Հոկտեմբերի 25-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) մարդասիրական օգնություն տրամադրեց Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Սիլիկյան 23 փողոցի 9 շենքում հոկտեմբերի 22-ի խոշոր հրդեհի հետևանքով տուժած 11 ընտանիքներին՝ 23 մարդու:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների՝ մարզպետարանի և քաղաքապետարանի հետ, պատահարից անմիջապես հետո ձեռնամուխ եղավ տուժածների առաջնային կարիքների արագ գնահատմանը:
Գնահատման արդյունքների հիման վրա ձևավորելով կենսական անհրաժեշտության պարագաների ցանկը, որպես արագ արձագանք, ՀԿԽԸ-ն այսօր տուժածներին տրամադրեց 1 ամսվա համար նախատեսված սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ, ծալովի մահճակալներ, տաք ծածկոցներ, ձմեռային կոշիկ, բաճկոններ և տաբատներ, սպորտային հագուստ և խալաթներ: Բացի այդ, ընտանիքները օրը մեկ անգամ տաք ճաշ կստանան ՀԿԽԸ բարեգործական ճաշարանում, որը գործում է Արմավիր քաղաքում միայնակ տարեցների համար:
Հոկտեմբերի 22-ին, ժամը 22:00 սահմաններում խոշոր հրդեհ էր բռնկվել Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Սիլիկյան 23 փողոցի 9 շենքում: Հրդեհի հետևանքով շենքն ամբողջությամբ մոխրացել էր, իսկ շենքում բնակվող 11 ընտանիքները՝ մնացել անօթևան:

Կամավորների միջազգային օրը

Այս տարի ևս Հայկական Կարմիր խաչի ընկերությունը նշեց դեկտեմբերի 5-ը՝ Կամավորների միջազգայինօրը: Շուրջ բոլորը կարմիր խաչեր էին ու խաչականներ՝ աշխատակիցները, գործընկերներ, և իհարկե՝ կամավորներ: Բոլորը շնորհավորում էին միմյանց՝ ամբողջ տարվա ընթացքում մարդասիրական գործունեությանը նվիրված ծառայելու համար: «Մենք օգնում ենք Ձեր (կամավորների) օգնությամբ» կարգախոսն այսօր ավելի քան արդիական էր:

Երեկոյին ներկա էին մոտ երեսուն կամավորներ՝ Երևանից ու տարբեր արզերից, որոնք առավել ակտիվ էին եղել տարվա ընթացքում: Նրանք Հայկական Կարմիր խաչի կամավորների բազմահազարանոց բանակի միայն մի փոքր մասին էին ներկայացնում, քանի որ սրահում նրանց բոլորին տեղավորել հնարավոր չէր լինի:
Տարվա ընթացքում նվիրված ու ոգևորվածաշխատանքի համար շնորհակալագրեր ու նվերներ ստացան Սարգիս Ավետիսյանը, Հայկ Մարտիրոսյանը, Վերգինե Բուդղարյանը, Հրանուշ Աբրահամյանը, Անի Միրաքյանը, Վազգեն Բեջանյանը, Աստղիկ Աթանյանը, իսկ թիմային աշխատանքի համար Շնորհակալագրերի արժանացան Արարատի, Տավուշի և Արմավիրի կամավորները՝ Դիաբետի, Երեխաների կայուն զարգացման և Բարեգործական ճաշարանի ծրագրերը հաջողությամբ իրագործելու համար:
Պաշտոնական արարողությունից հետո երեկոն երիտասարդների տիապետության տակ անցավ: Ուրախ

Armenian Red Cross Society distributed humanitarian aid to the affected people in Armavir fire

On 25 October, Armenian Red Cross Society (ARCS) distributed humanitarian aid to the 11 families, 23 people in total, affected by a serious fire occurred on 22 October at Silikyan street 23-9 building of Armavir city, Armavir Region.
Armenian Red Cross Society, initiated rapid basic needs assessment immediately after the accident, cooperating with local authorities, Regional administration and Municipality.
Based on the assessment results, the list of vital supplies was developed, and, as a rapid response, today ARCS distributed humanitarian aid consisted of food and hygiene items for 1 month, blankets, folding couches, winter shoes, coats and trousers, home clothes for men and women. The families will receive hot meal once a day in Soup kitchen operated by Armenian Red Cross Society on Armavir for lonely elderly people.
On 22 October, at 22:00 a serious fire occurred in, Silikyan street 23-9 building, Armavir city, Armavir Region. As a result, the building totally burned, leaving 11 families without shelter.

International Volunteers Day 2017

On 5 December 2017 as well, like previous years, Armenian Red Cross Society celebrated The International Volunteer Day. Red Crosses were all around, as well as Red Cross people: staff, partners, and, of course, volunteers. They were congratulating and greeting each other for serving humanitarian needs of their communities all year around. The slogan "We help with Your (Volunteers) help", related to everyone here.

The most active 30 volunteers from Yerevan and regions, participated in the event. They presented only the small percent of the big army of volunteers, as the event space was too small to place them all.
For the devoted and committed work during the year, the following volunteers received Thank you letters and small presents: Sargis Avetisyan, HaikMartirosyan, VergineBudaghyan, Ani Mirakyan, Hranush Abrahamyan, VazgenBejanyan and others. For team work Ararat, Tavush and Armavir volunteers were awarded for Diabetes,

ու ջերմ մթնոլորտում, երիտասարդները, իրենց բնորոշ խանդավառությամբ կազմակերպեցին տարբեր խաղեր, ապահովեցին ուրախ ժամանց:

«Խաչականները» չեն հեռանում առանց օգնելու...

- Զանգը տվեցին: Կանգնեցի՝ բացեմ, բայց կանգնեցի ու ընկա: Մտածում էի՝ գոնե զանգը տվողը չգնա, մի կերպ ներս մտնի, օգնի - պատմում է Կարինե տատը, ով Հայկական Կարմիր խաչ ընկերության «Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի շահառուներից մեկն է:

Զանգը տվողը «խաչականներն» էին, իսկ նրանք չեն հեռանում առանց օգնելու: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել տարեցների, քրոնիկ հիվանդություն ունեցող անձանց և հաշմանդամների կյանքի որակը՝ առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության բարելավման միջոցով: Նախնական հետազոտությունները պարզել են, որ տարեցները և սահմանափակ կարողություններով անձինք ցանկանում են լինել որքան հնարավոր է անկախ ու ստանալ խնամք և աջակցություն՝ մնալով տանը, մասնակցել համայնքային ակտիվ կյանքին՝ հնարավորություն ունենալով օգտակար լինել իրենց գիտելիքներով ու հմտություններով: Այսպիսով Հայկական Կարմիր խաչի թիմը՝ բուժքույրը և տնային խնամք իրականացնողը, պարբերաբար այցելում են միայնակ տարեցներին: Այդ օրը Կարմիր խաչի աշխատակիցները հարևանի օգնությամբ բացում են դուռը, Կարինե տատին տանում հիվանդանոց: Մինչ այդ Կարինե տատը անկողնային հիվանդ էր, բայց Հայկական Կարմիր խաչի թիմի շնորհիվ արդեն քայլում է: Դժվարությամբ, բայց քայլում է: Այդ օրվանից սկսած Նարինեն (բուժքույր) ու Գայանեն (տնային խնամք իրականացնող) Կարինե տատի հյուրերն են դարձել:

- Շաբաթական 3 անգամ այցելում են, միշտ զանգում են՝ տեսնեն՝ ի՞նչ է պետք, առևտուր են անում ու գալիս: Ինձ ապահովում են սննդով, դեղերով ու, քանի որ տնակում եմ ապրում, նաև վառելիքով՝ փայտով, օգնում են վարժություններ անեմ, որ ավելի լավ քայլեմ: Նրանց օգնությամբ արդեն հաշմանդամության կարգ ունեմ, վերջերս էլ այնպես արեցին, որ եռամսյա միանվագ սոցիալական օգնություն ստացա՝ 18 հազար դրամի չափով: Մինչև Կարմիր խաչի հայտնվելը ոչ թոշակ էի ստանում, ոչ նպաստ:

Child Resilient and Soup Kitchen projects.
After the official part of awards and certificates, young people ruled the party, with songs, dances and games.

Red Cross would not leave without helping

''The doorbell rung, I stood up to go and open the door, but once I stood up, I fell down. I was laying with the hope inside, that the person who rang the bell, would enter and help me", grandma Karine tells.

She is Armenian Red Cross Society's "Integrated Community-Based Home Care Service Provision and Healthy Ageing" program beneficiary. Armenian Red Cross Society volunteers were those, who rang the doorbell, and they would not leave without helping. The project aims to improve quality of life of the elderly, the disabled and the persons with chronic disease, by improving access to integrated health care and social services. The preliminary researches showed that old people and people with disabilities want to be as free as possible and get care and help staying at home, taking part in their communities' life and having a chance to be useful with their skills and knowledge. Thus, Armenian Red Cross Society team of the nurse and home care specialist, periodically visit lonely elderly people.
That day they opened the door with the help of the neighbours and took grandma Karine to the hospital. Narine (nurse) and Gayane (home care specialist) became frequent guests in her house.
The woman was bedridden, but with the support and care of Red Cross staff, she started to walk.
"They visit me 3 times a week, always call to know what I need, they buy necessary things for me and visit me. They provide me with food, drugs and also with fuel (wood), they also help me to do my exercises in order to walk better. They helped me to get the disability category and recently they helped me to get three month social pension of 18.000 dram. Before Armenian Red Cross Society staff visits I'd got neither pension nor the benefit", she says.